



ՆԱԽԱԳԾԱ- ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Պետական լիցենզիա №ՔՊԼ 001233

Արարատ ԳԲԿ-ի կապիտալ նորոգում

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Շինարարության կազմակերպման նախագիծ

Հատոր 7

ՕԲՅԵԿՏ № 18-004-25

ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԳԼԽԱՎՈՐ
ՃԱՐՏԱՐԱԳԵՏ՝

Հ. ԻՍՊԻՐՅԱՆ

ՆՀԲ ՊԵՏ՝

Գ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՆԱԽԱԳԾԻ ԳԼԽԱՎՈՐ
ՃԱՐՏԱՐԱԳԵՏ՝

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2026

N		Նշանակումը			Անվանումը				Ծանոթություն																																				
Օբյեկտ՝ Արարատ ԳԲԿ-ի կապիտալ նորոգում																																													
Աշխատանքային նախագիծ																																													
1	ԸԲ		Ընդհանուր բացատրագիր																																										
2			Ճարտարապետաշինարարական մաս																																										
2.1	Ճ		Ճարտարապետական լուծումներ																																										
2.2	ԵԿ		Կոնստրուկտիվ լուծումներ																																										
3			Տեխնոլոգիական մաս																																										
3.1	Տ		Տեխնոլոգիական լուծումներ																																										
3.2	Ա		Տեխնոլոգիական պրոցեսների ավտոմատացում																																										
4	ԷՄ		Էլեկտրամատակարարում, շամթապաշտպանություն և հողանցում																																										
5	ԶՕ		Զեռուցում և օդափոխություն																																										
6	ԷՔՊ		Էլեկտրաքիմիական պաշտպանություն																																										
7	ՇԿՆ		Շինարարության կազմակերպման նախագիծ																																										
8			Տեխնոլոգիական ժամանակավոր լուծումներ																																										
9	Ն		Նախահաշիվ																																										
<div style="display: flex; align-items: center;"> <div style="writing-mode: vertical-rl; transform: rotate(180deg); border: 1px solid black; padding: 2px;">Согласовано</div> <table border="1" style="margin-left: 10px;"> <tr><td></td><td></td><td></td></tr> <tr><td></td><td></td><td></td></tr> <tr><td></td><td></td><td></td></tr> <tr><td></td><td></td><td></td></tr> </table> </div>																																													
Взам. инв. №		Подп. и дата		<div style="display: flex; justify-content: space-between;"> <div> <table border="1"> <tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr> <tr><td>Փոփ</td><td>Մասն</td><td>Թերթ</td><td>№ստ</td><td>Ստոր.</td><td>Ամ.ա</td></tr> <tr><td>ՆԳՃ</td><td>Վարդանյան</td><td></td><td></td><td></td><td>02.2026</td></tr> <tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr> <tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr> <tr><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr> </table> </div> <div>18-004-25 ՆԿ</div> </div>												Փոփ	Մասն	Թերթ	№ստ	Ստոր.	Ամ.ա	ՆԳՃ	Վարդանյան				02.2026																		
Փոփ	Մասն	Թերթ	№ստ	Ստոր.	Ամ.ա																																								
ՆԳՃ	Վարդանյան				02.2026																																								
Инв. № подл.				<div style="display: flex; justify-content: space-between;"> <div>Նախագծի կազմը</div> <div> <table border="1"> <tr><td>Փուլ</td><td>Թերթ</td><td>Թերթեր</td></tr> <tr><td>ԱՆ</td><td>1</td><td>1</td></tr> </table> </div> </div>						Փուլ	Թերթ	Թերթեր	ԱՆ	1	1																														
										Փուլ	Թերթ	Թերթեր																																	
ԱՆ	1	1																																											
Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաճյուղ																																													

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ՝

1	ՆՇԱՆՆԵՐ և ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ	5
2	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
3	ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ	7
4	ՕԲՅԵԿՏԻ ՏԵՂԱՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ	8
5	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ	8
5.1	Հիմնական շինարարական մեքենաներ, մեխանիզմներ և տրանսպորտային միջոցներ	9
5.2	Ջրի և էներգետիկ ռեսուրսների ապահովում	10
5.3	Ժամանակավոր շենքեր և շինություններ	11
5.4	Շինարարության տևողություն	11
5.5	Կադրային պահանջարկ	12
6	ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	13
6.1	Նախապատրաստական ժամանակահատվածի աշխատանքներ	13
6.2	Հիմնական ժամանակահատվածի աշխատանքներ	14
6.2.1	Ապամոնտաժման աշխատանքներ	14
6.2.2	Հողային աշխատանքներ	14
6.2.3	Բեռնադրման և երկաթբետոնային աշխատանքներ	15
6.2.4	Եռակցման աշխատանքներ	16
6.2.5	Գազատարերի մոնտաժ և տեղադրում	17
6.2.6	Խողովակաշարերի խողովակի մաքրում և փորձարկում	17
6.2.7	Ջողակարերի ստուգում	19
6.2.8	Մեկուսիչ աշխատանքներ	20
6.2.9	Էլեկտրամատակարարում, լուսավորություն, հողանցում և շանթապաշտպանություն	21
6.2.10	Էլեկտրաքիմիական պաշտպանություն (ԷՔՊ)	23
6.2.11	Ջեռուցում և օդափոխություն	25
6.2.12	ԳԲԿ-ի տարածքի բարեկարգում	26

7	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ	27
8	ԿՌՈՒՆԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ	28
9	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	29

Հավելվածներ՝

-	Շինարարության գլխավոր հատակագիծ	Թերթ 1
-	Բեռնման և բեռնաթափման աշխատանքների տեխնոլոգիական սխեմա	Թերթ 2
-	Արտանետման մոմի տեղադրման Տեխնոլոգիական սխեմա	Թերթ 3
-	Շանթարգելների տեղադրման տեխնոլոգիական սխեմա	Թերթ 4
-	Ստորգետնյա հոտավորման տարրայի տեղադրման տեխնոլոգիական սխեմա	Թերթ 5
-	Շինարարական աշխատանքների իրականացման օրացուցային գրաֆիկ	Թերթ 6

1 ՆՇԱՆՆԵՐ և ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ

ԳԲԿ	–	գազաբաշխիչ կայան
ՆՏՌ	–	նյութա-տեխնիկական ռեսուրսներ
ԻՏԱ	–	ինժեներա – տեխնիկական աշխատակիցներ
ՆՏՓ	–	նորմատիվա - տեխնիկական փաստաթուղթ
ՇԿՆ	–	շինարարության կազմակերպման նախագիծ
ՀՀ	–	Հայաստանի Հանրապետություն
ՇՄԱ	–	շինմոնտաժային աշխատանքներ
ԺՇևՇ	–	ժամանակավոր շենքեր և շինություններ

2 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շինարարության կազմակերպման նախագիծը մշակված է N°18/004-25 «Արարատ ԳԲԿ-ի կապիտալ նորոգում»:

Պատվիրատու – «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ:

Նախագծող - «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ, «Ինժեներատեխնիկական կենտրոն» մասնաձյուղ:

Նախագծման իրավունքը տրամադրված է Էներգետիկայի ոլորտում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման N° ՔՊԼ 001233 լիցենզիայով, որը տրվել է ՀՀ Քաղաքաշինության Նախարարության կողմից:

Շինարարության տեսակ – կապիտալ նորոգում:

Նախագծման փուլ – աշխատանքային նախագիծ:

Նախագծային փաստաթղթերը մշակված են համաձայն՝

1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ-գլխավոր ճարտարագետի գրության N° Ն/29/18446 2025, տրված՝ 22.04.2025 թ.
2. Նախագծման հանձնարարական

Շինարարության կազմակերպման նախագիծը մշակված է համաձայն հետևյալ գործող ՆՏՓ-ի:

3 ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀՇՆ	22-01-2024	Շինարարական կլիմայաբանություն
ՀՀՇՆ	I -3.01.01-2008	Շինարարական արտադրության կազմակերպում
ՍՆԻՊ	3.02.01-87	Հողային կառուցվածքներ, հիմնատակեր և հիմքեր
ՀՀՇՆ	34-02-2023	Մայրուղային խողովակաշարեր
ՀՀՇՆ	52-01	Բետոնե և ե/բետոնե կոնստրուկցիաներ
ՀՀՇՆ	13-03-2022	Կրող և պատող կոնստրուկցիաներ
ՀՀՇՆ	13-02-2022	Անվտանգության տեխնիկան շինարարությունում
ՍՆԻՊ	1.04.03-85*	Ձեռնարկությունների շենքերի և կառուցվածքների շինարարության տևողության նորմերը

4 ՕԲՑԵԿՏԻ ՏԵՂԱՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ինժեներա – երկրաբանական եզրակացությունը ներկայացված է հատոր 1-ում:

5 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Բոլոր ՇՄԱ-ը պետք է կատարվեն համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008-ի «Շինարարական արտադրության կազմակերպում» և «Շինարարական արտադրության կազմակերպման կարգի», հաստատված 14.01.2008թ. ՀՀ քաղաքաշինության նախարարի N 07-Ն հրամանով:

Աշխատանքները իրականացվում են ընդունված շինարարական մեթոդներով: Նախագծով նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝

- Հողային աշխատանքներ
- Բետոնե և ե/ բետոնե աշխատանքներ
- Մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքներ
- Եռակցման աշխատանքներ
- Մեկուսիչ աշխատանքներ
- Զոդակարերի ստուգում
- Լվացում, փչամաքրում (2 անգամ), ամրության և հերմետիկության փորձարկում
- Նախագծվող գազատարի ներմիացում գործող գազատարին
- Տարածքի բարեկարգում

Կապիտալ նորոգուման աշխատանքները սկսվում են օբյեկտը Կապալառուին հանձնելուց հետո համաձայն հանձնման ակտի:

Հիմնական աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է կատարել նախապատրաստական աշխատանքների կոմպլեքս՝

- նախագգուշացնող նշանների և ազդանշանային լապտերի շարանի տեղադրում;
- շինհրապարակի տարածքի ցանկապատում և վտանգավոր գոտիների սահմանների նշում;
- շինհրապարակի լուսավորության ապահովում;

- մուտքի մոտ տեղադրվում են նախազգուշացնող վահանակներ՝ օտար անձանց կողմից շինարարության տարածք մուտքը կատեգորիկ արգելելու մասին, և համապատասխան վերահսկողության կազմակերպում՝ դա կանխելու համար;
- նախապատրաստվում են սանիտարա-կենցաղային սենքեր (ժամանակավոր) բանվորների համար;
- շինանյութերի պահեստավորման համար հարթակների նախապատրաստում;
- շինարարական մեքենաները և մեխանիզմները տեղակայվում և փորձարկվում են ըստ ցանկի;
- անվտանգ կատարման համար նախատեսված գույքի, սարքերի և միջոցների նախապատրաստում և տեղադրում բրիգադի աշխատանքների գոտում;
- աշխատողների ծանոթացում տեխնոլոգիային;
- շրջակա միջավայրի պահպանության և աշխատանքի անվտանգության միջոցառումների իրականացում:

Աշխատանքները իրականացվում են գորշող ԳԲԿ-ի տարածքում, նեղվածքային պայմաններում: Այն հատվածներում, որտեղ մեխանիզմների մոտեցումը անհնար է, աշխատանքները իրականացվում են ձեռքով:

Աշխատանքները իրականացվում են հաշվի առնելով ԳԲԿ-ի պարտադիր անխափան և շարունակական աշխատանքը (գազամատակարարման ժամանակավոր դադարեցումը թույլատրվում է 36 ժամից ոչ ավել):

5.1 Հիմնական շինարարական մեքենաներ, մեխանիզմներ և տրանսպորտային միջոցներ

Հիմնական մեքենաների, մեխանիզմների և փոխադրման միջոցների տեսակը և քանակը որոշվում է համապատասխան շինմոնտաժային աշխատանքների ֆիզիկական ծավալներին, շինանյութերի քաշին և շինարարության կազմակերպման ընդունված մեթոդներին:

Հիմնական մեքենաների և մեխանիզմների մոտավոր ցանկ

Nº/№ h/h	Անվանում	Քանակ
1	2	3
1	Ավտոինքնաթափ 20տ բեռնունակությունով	2
2	Կողային ավտոինքնաթափ 10տ բեռնունակությունով	2
3	Ավտոամբարձիչ (ավտոկունկ) 16 տ բեռնունակությունով (սլաքի թռիչքը 25մ)	1
4	Դիզելային էլեկտրակայան ԴԷԿ - 60	1
5	Վերանբարձ սարքեր	2
6	Եռակցման սարք	1
7	Էքսկավատոր 0.4 - 0.65 մ³ կոնքի տարողությունով	1
8	Կոմպրեսոր	1

Շինանյութերի մատակարարումը շինհրապարակ իրականացվում է գոյություն ունեցող ավտոճանապարհներով: Ավտոտրանսպորտի և շինտեխնիկայի մոտեցումը իրականացվում է գոյություն ունեցող ավտոճանապարհներով: Եռակցման սարքի աշխատանքը իրականացվում է շարժական դիզելային էլեկտրակայանից: Ոչ աշխատանքային ժամերին շինարարական մեքենաները և մեխանիզմները պետք հեռացվեն շինարարական աշխատանքների տարածքից հատուկ հատկացված տարածք:

Պահեստների տեղակայումը որոշվում է տեղում:

Նախագծում մշակված է շինարարության գլխավոր հատակագիծ (թերթ1):

5.2 Ջրի և էներգետիկ ռեսուրսների ապահովում

Շինարարության ապահովումը ջրով, էներգիայով իրականացվում է՝

- էլեկտրաէներգիայով՝ շարժական էլեկտրակայանից;
- վառելանյութերով՝ տեղում ձեռքբերելով;
- ջրով տնտեսական կարիքների համար՝ բերովի ջուր:

Կենցաղային կարիքները հոգալու համար ջրի անհրաժեշտ քանակությունը (ջրի հաշվարկային ծախսը համաձայն նորմերի կազմում է հերթափոխում մեկ բանվորի համար 15լ) բերվում է շարժական անոթներով (передвижная емкость): Հրդեհի մարման համար ջուրը բերովի է (ջրի հաշվարկային ծախսը համաձայն նորմերի կազմում է 15լ/վրկ):

Խմելու ջրի պահանջարկի հաշվարկը կատարվում է հաշվի առնելով հերթափոխում ամենաշատ աշխատողների քանակը և շինարարության

տնողությունը՝ հերթափոխում 3 լիտր ջուր մեկ աշխատողի համար: Կապի միջոցը շինհրապարակում որոշում է շինարարական կազմակերպությունը:

Էլեկտրաէներգիայի, վառելանյութի, ջրի պահանջվող քանակը (կազմակերպության մեքենաների և մեխանիզմների առկա բազային համապատասխան) կվորոշվի շինմոնտաժային աշխատանքները (ՇՄԱ) սկսելուց առաջ շինարարական կազմակերպության կողմից աշխատանքների կատարման նախագծում:

5.3 Ժամանակավոր շենքեր և շինություններ

Բանվորների սպասարկման հարցերը պետք է կարգավորի շինարարական կազմակերպությունը, որը պետք է նախատեսի ժամանակավոր շենքեր և շինություններ: ԺՇնՇ հարթակը նախատեսվում է տեղակայել (շինություններից ազատ) (տես թերթ 1):

Ժամանակավոր շենքերի և շինությունների մոտավոր ցանկ՝

1. Աշխղեկի գրասենյակ
2. Հանդերձարան
3. Զուգարան
4. Գործիքների պահեստ
5. Կիսածածկ պահեստ

5.4 Շինարարության տնողություն

Շինարարական աշխատանքների տնողությունը հաշվարկված է համաձայն շինարարական նորմերի, ելնելով աշխատանքների ծավալից և գործող ԳԲԿ-ի տարածքում նորոգման դժվարություններից, հաշվի առնելով նեղվածքային պայմանները և կազմում է 6 ամիս (ճշտվում է շինարարության աշխատանքների ընթացքում): Աշխատանքները նախատեսվում է իրականացնել 1 հերթափոխով (8 ժամ): Պետք է հաշվի առնել, որ բնակավայրերի գազամատակարարման ժամանակավոր ընդհատումը թույլատրվում է 36 ժամից ոչ ավելի:

Նախագծում մշակված է շինարարական աշխատանքների իրականացման օրացուցային գրաֆիկ (թերթ 6):

5.5 Կադրային պահանջարկ

Աշխատուժի անհրաժեշտ քանակը շինարարության համար որոշվում է համապատասխան աշխատանքների ծավալների և շինարարության տևողությանը: Բանվորական ուժի պահանջարկը ճշտվում է շինարարության աշխատանքների ընթացքում:

Նախագիծը նախատեսում է աշխատանքների կատարում կոմպլեկս բրիգադով: Շինարարական կազմակերպության կառուցվածքը աշխղեկի տեղամասն է: Նորոգում իրականացնելիս նախատեսվում է կոմպլեկս հոսք: Մասնագիտացված շինարարական աշխատանքներն իրականացվում են մասնագիտացված ենթակապալառու կազմակերպությունների կողմից:

Աշխատանքների կատարման ժամկետը կրճատելու նպատակով նախատեսվում է աշխատանքների համատեղում ժամանակի մեջ:

Ընդհանուր աշխատողների թիվը՝ $R = R_f + R_{\text{իտա}} + R_{\text{ծ}} + R_{\text{կսպ}}$, որտեղ

R_f -ն՝ բանվորների քանակն է,

$R_{\text{իտա}}$ -ն՝ ինժեներատեխնիկական անձնակազմի թիվը,

$R_{\text{ծ}}$ -ն՝ ծառայողների թիվը,

$R_{\text{կսպ}}$ -ն՝ կրտսեր սպասարկող անձնակազմի թիվը:

$R_f = R_h + R_o$, որտեղ

R_h – հիմնական արտադրության վրա աշխատող բանվորների թիվն է,

R_o – օժանդակ աշխատանքների վրա զբաղված աշխատողների թիվը:

R_o -ն $= 0.2 R_f$, $R_f = 1.2 \times R_{\text{max}}$, $R_{\text{max}} = 29$

$R_f = 1.2 \times R_{\text{max}} = 1.2 \times 29 = 35$ մարդ

Համաձայն ՆՏՓ-ի աշխատողների թիվը ըստ կատեգորիաների՝

Անվանում	Աշխատողների քանակը, մարդ
Աշխատողներ, այդ թվում՝	42
- բանվորներ (83,9%)	35
- ԻՏԱ (11%)	5
- ծառայողական կազմ, սպասարկող և պահակային կազմ (5,1%)	2

6 ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ Կապալառուն պետք է ունենա աշխատանքային փաստաթղթեր, հաստատված Պատվիրատուի կողմից:

Նախագծով նախատեսվում է՝

- ԳԲԿ-ի գոյություն ունեցող շենքերի, շինությունների, տեխնոլոգիական խողովակների, սարքերի և սարքավորումների ապամանտաժ և քանդում,
- ԳԲԿ-ի նախագծվող նոր շենքերի, շինությունների տեխնոլոգիական խողովակների, սարքերի և սարքավորումների մանտաժ և տեղադրում,
- Էլեկտրամատակարարում, լուսավորություն, հողանցում և շանթապաշտպանություն,
- Էլեկտրաքիմիական պաշտպանություն,
- Ջեռուցում և օդափոխություն,
- ԳԲԿ-ի տարածքի բարեկարգում:

6.1 Նախապատրաստական ժամանակահատվածի աշխատանքներ

Հիմնական աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է կատարել նախապատրաստական աշխատանքների կոմպլեքս՝

- Կապալառուի ժամանակավոր շինարարական տնտեսության կազմակերպում;
- շինարարական մեքենաների և սարքավորումների մատակարարում շինհրապարակ;
- Բեռնման և բեռնաթափման աշխատանքների կազմակերպում;
- գործող ստորգետնյա հաղորդակցությունների հայտնաբերում, որոնք ընկնում են աշխատանքային գոտում, դրանք տարածքի վրա նշելով;
- ապամոնտաժված կոնստրուկցիաների և շինարարական թափոնների ժամանակավոր պահեստավորման հարթակի կազմակերպում:

Նախապատրաստական ժամանակահատվածում աշխատանքները պետք է իրականացվեն նորմատիվ պահանջներին համապատասխան:

Նախագծով նախատեսվում է նյութերի պահեստավորման, տեխնիկայի կայանման համար հարթակի:

Ապամոնտաժված էլեմենտների պահեստավորումը նախատեսվում է իրականացնել աշխատանքային գոտիներում:

Ապամոնտաժված էլեմենտների հեռացումը իրականացվում է պարբերաբար: Աշխատանքային տարածքում երկարաժամկետ պահեստավորում չի թույլատրվում:

Նախագծում մշակված են բեռնման և բեռնաթափման աշխատանքների տեխնոլոգիական սխեմա (թերթ2):

6.2 Հիմնական ժամանակահատվածի աշխատանքներ

6.2.1 Ապամոնտաժման աշխատանքներ

Ապամոնտաժման աշխատանքները կարող են իրականացվել գազից և կոնդենսատից ամբողջությամբ ազատվելուց և Պատվիրատուի թույլտվությունից հետո:

Ապամոնտաժման աշխատանքները կարող են իրականացվել միայն սահմանված կարգով գիտելիքների ստուգում անցած և աշխատանքի համար պատասխանատու անձի ներկայությամբ:

Նախքան ապամոնտաժելը պետք է ձեռնարկվեն բոլոր միջոցները՝ դրա իրականացման անվտանգությունն ապահովելու և վթակային իրավիճակների առաջացումը կանխելու համար:

Ապամոնտաժված խողովակի բարձրացումը պետք է կատարվի հանգիստ, սահուն և առանց տատանումների:

Ապամոնտաժված էլեմենտները նախատեսվում է տեղափոխել ինքնաթափերով Պատվիրատուի մշտական բազա 70կմ հեռավորության վրա:

6.2.2 Հողային աշխատանքներ

Մշակման ենթակա բնահողերը պատկանում են II, V կարգերին:

Բնահողերի մշակումը իրականացվում է ձեռքով և հարվածահատ մուրճով: Հետլիցքը իրականացվում է ձեռքով: Ավելացված բնահողը հարթեցվում է տեղում:

Խրամուղու հատակին զազատարի տակ ստեղծվում է ավազի նախապատրաստական շերտ $\delta=0.1$ մ և իրականացվում է խողովակաշարի հետլիցք նույն բնահողով ձեռքով:

6.2.3 Բետոնային և երկաթբետոնային աշխատանքներ

Նախագիծը ներառում է գազաբաշխիչ կայանի տարածքում հին բետոնե հարթակների քանդումը (շինմոնտաժային աշխատանքների սկզբում):

Բետոնային աշխատանքները պետք է կատարվեն համապատասխան ՀՀՇՆ 52-01-ի պահանջներին:

Նախագծով նախատեսվում է նախապատրաստական շերտի իրականացում M100 (B7.5) բետոնով, կետային հիմքի իրականացում (ցանկապատի համար) M200 (B15) բետոնով, ժապավենային և կետային հիմքերի, պատերի, սալերի, հատակի իրականացում տեխնոլոգիական հանգույցների, շենքերի, շինությունների համար M250 (B20), M200 (B15) բետոնով, երկաթբետոնով և խամքարաբետոնով, կետային հիմքի իրականացում (հենարանների համար) M200 (B15), տեխնոլոգիական հանգույցների շինությունների համար հարթակի նախաշերտ ամրանավորված բետոնից M100 (B7.5), արտանետման մոմի համար ե.բ. հենարանների և սալերի իրականացում M250 (B20) երկաթբետոնով:

Կադապարամածը տեղադրելուց առաջ հարթակը պետք է հարթեցվի և վերջնական ստուգվի: Կադապարամածի տեղադրումը, չափսերը և դիրքի շեղումը պետք է համապատասխանի ՀՀՇՆ 13-03-2022-ի: Կադապարամածի քանդումը իրականացվում է բետոնի նախագծային ամրության 70% ստանալուց հետո: Բետոնի հասունացման շրջանը կազմում է 28 օր:

Ամրանային պողպատը (арматурная сталь) պետք է համապատասխանի նախագծում նշված ԳՕՍՏ-ին: Բետոնը տեղադրելուց առաջ բետոնով ծածկվող էլեմենտները (ձևավոր մասեր, ամրան) պետք է ընդունվեն համապատասխան ակտով:

Բետոնային աշխատանքները նախատեսվում է իրականացնել տարվա չոր եղանակային պայմաններում: Տեղադրված բետոնը խտացվում է թրթռիչով (вибратор): Բետոնը բերվում է ավտոմեքենայով (автомобетоновоз), կամ պատրաստվում է տեղում:

Հարթակի միաձույլ բետոնի տեղադրումը պետք է կատարել շինմոնտաժային աշխատանքների ավարտից հետո:

6.2.4 Եռակցման աշխատանքներ

Եռակցման աշխատանքները պետք է կատարվեն համապատասխան հետևյալ ՆԹՓ-ի պահանջներին՝ СТО Газпром 2-2.2-136-2007 часть1, СТО Газпром 2-2.4-083-2007:

Եռակցման աշխատանքների իրականացումը իր մեջ ներառում է հետևյալ պարտադիր միջոցառումների ցուցակ՝

- եռակցման աշխատանքների նախապատրաստման և իրականացման պատասխանատու անձանց նշանակում Կապալառուի կողմից;
- կրակային (огневые) աշխատանքների անցկացման կարգադիր-ույլատրության ձևակերպում;
- եռակցման նյութերի, սարքավորումների և գործիքների նախապատրաստում;
- եռակցման աշխատանքների անցկացման վայրի օդի զննում;
- զոդման ենթակա մասերի մակերեւույթի նախապատրաստում;
- անմիջականորեն եռակցման աշխատանքներ;
- եռակցման որակի հսկողություն:

Եռակցման աշխատանքները իրականացվում են ատեստավորում անցած մասնագետների ղեկավարության ներքո, համապատասխան նորմերի: Եռակցողները պետք է անցնեն ատեստավորում և ունենան վկայական:

Օգտագործվող եռակցման նյութերի տեսակները պետք է համապատասխան են հետևյալ ՆՏՓ-ի պահանջներին՝ ԳՕՍՍ 9466-75* (Էլեկտրոդ); ԳՕՍՍ 9087-81 (օքսիդալուծիչ); ԳՕՍՍ 2246-70 (մետաղալար); ԳՕՍՍ 10157-79* (A տեսակի արգոն); ԳՕՍՍ 8050-85* (եռակցման ածխածնի երկօքսիդ, ածխաթթվային գազ):

Գազային կտրումը կատարելու համար օգտագործում են՝ տեխնիկական թթվածին (ԳՕՍՍ 5583-78), ագետիլեն բալոնների մեջ (ԳՕՍՍ 5457-75), պրոպան-բութան խառնուրդ (ԳՕՍՍ 5457-75):

Ատեստավորում չանցած սարքավորումների օգտագործումը եռակցման և մոնտաժման աշխատանքների ժամանակ արգելվում է:

Խողովակների կցվանքի եռակցումը իրականացվում է էլեկտրաաղեղային (электродуговая) եռակցումով:

Անձրևի, ձյան, մառախուղի և քամու (քամու արագությունը >10 մ/վրկ) ժամանակ եռակցման աշխատանքները թույլ է տրվում իրականացնել, եթե ապահովված է եռակցման տեղի պաշտպանությունը խոնավությունից և քամուց:

6.2.5 Գազատարերի մոնտաժ և տեղադրում

Խողովակաշարերի մոնտաժը պետք համապատասխանի գործող ՆՏՓ-ի պահանջներին:

Խողովակաշարի մոնտաժման աշխատանքների փաթեթը իր մեջ ներառում է հետևյալ աշխատանքները՝

- նախապատրաստական;
- մոնտաժման;
- հավաքակցման և եռակցման (сборочно-сварочные);
- փորձարկում;
- շահագործման հանձնում (пусковые):

Խողովակների, փականների և այլ նյութերի մատակարարումը իրականացվում է տրանսպորտային միջոցներով հիմնական ճանապարհներով:

Վերգետնյա եղանակով գազատարը տեղադրվում է հենասյուների վրա:

Ստորգետնյա գազատարը տեղադրվում է խրամուղում նախապատրաստված հիմքի վրա և այնպես, որ խորությունը խողովակի վերևի նիշից կազմի 1.0 մետրից ոչ պակաս:

Նախագծում մշակված են արտանետման մոմի տեղադրման տեխնոլոգիական սխեմա (թերթ 3), ստորգետնյա հոտավորման տարրայի տեղադրման տեխնոլոգիական սխեմա (թերթ 5):

6.2.6 Խողովակաշարերի խոռոչի մաքրում և փորձարկում

Շահագործման հանձնելուց առաջ գազատարը ենթարկվում է խոռոչի մաքրման, ամրության փորձարկման և հերմետիկության ստուգման համապատասխան ՆՏՓ-ի:

Նախագծում ընդունված է փորձարկման հիդրավլիկ մեթոդը: Խողովակաշարերի փորձարկումը պետք է իրականացվի աշխատանքային

հանձնաժողովի հսկողության ներքո, որը նշանակված է կապալառու շինարարական կազմակերպության և պատվիրատուի համատեղ հրամանով:

Խողովակաշարերի փորձարկումը իրականացվում է համաձայն նախագծի, СТО Газпром 2-3.5-354-2009, ՀՀՇՆ 34-02-2023-ի:

Փորձարկումը ավարտելուց հետո ջուրը դուրս է մղվում գազատարի խոռոչից, կատարվում է խոռոչի չորացում: Գազատարի հատվածների չորացումը իրականացվում է չոր օդով: Եթե փորձարկվող հատվածը բացի խողովակից իր մեջ ներառում է ամրան (запорная арматура), միացման դետալներ (соединительные детали), ապարատներ, ապա փորձարկման ճնշումը պետք է հավասար լինի այդ հատվածի բոլոր էլեմենտներից փորձարկման փոքրագույն գործարանային ճնշմանը, բայց լինի գազատարի աշխատանքային ճնշման 1,25-ից ոչ ցածր:

Փչամաքրման և փորձարկման աշխատանքները պետք է սկսել, երբ խողովակաշարի հատվածները ամբողջովին պատրաստ են և կատարված է նախագծային նիշում տեղադրված խողովակաշարի հետլիցքը:

Ջրի հեռացումը իրականացվում է ինքնահոս, ամենացածր կետերից և արտամղումով սեղմված օդի միջոցով: Փչամաքրումը համարվում է ավարտված, երբ փչամաքրման կարճախողովակից դուրս է գալիս չաղտոտված օդի կամ գազի հոսք:

Գազատարը համարվում է փորձարկումը անցած և փորձարկման տվյալները համարվում են դրական, եթե փորձարկման ժամանակաշրջանում ճնշումը մնում է անփոփոխ, իսկ մեծ ճնշման ժամանակ գազի հոսակորուստ չի հայտնաբերվում:

Համակարգի դատարկումը իրականացվում է այն վայրը, որը համաձայնեցված է բնապահպանության տեղական մարմինների հետ: Հերմետիկության փորձարկման արդյունքները համարվում են դրական, եթե փորձարկման ժամանակահատվածում գազատարերում ճնշումը չի փոխվում, այսինքն՝ ըստ մանոմետրի ճնշման տեսանելի անկում չի նկատվում:

Գազատարի փորձարկման ժամանակ հայտնաբերված թերությունները վերացվում են միայն ճնշումը նվազեցնելուց (ստանալով մթնոլորտային ճնշում) հետո:

Խողովակաշարը խորհուրդ է տրվում լցնել ջրով և փորձարկել օդի դրական ջերմաստիճանի դեպքում; 0°C-ից ցածր ջերմաստիճանի դեպքում փորձարկումը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե խողովակաշարը պաշտպանված է սառցակալումից, կամ եթե ջրի մեջ ավելացնում են ռեագենտներ, որոնք կանխում են սառեցումը:

Գազատարի խոռոչի մաքրման աշխատանքները իրականացվում են յուրաքանչյուր չորացված հատվածի փչամաքրումով սեղմված օդով:

Սեղմված օդով փչամաքրման համար պետք է օգտագործվի ցածր ճնշման կոմպրեսորային կայանքներ AMC-4:

Փորձարկումներն ավարտելուց հետո անհրաժեշտ է ջուրը դատարկել աշխատանքային գոտում տեղադրված գոիչ-անոթի մեջ:

Հիրավի փորձարկման համար ջուրը նախատեսվում է ձեռք բերել մոտակա ջրհորներից: Ջրի անհրաժեշտ ծավալը կազմում է ≈ 28 մ³:

Ջովելուց հետո ջուրը գոիչ-անոթից պետք է դուրս մղվի կոյուղու մեքենայի միջոցով և տեղափոխվի մոտակա մաքրման կայան՝ նախապես պայմանագիր կնքելով այս կազմակերպության հետ:

Նախքան ջուրը մաքրման կայան հանձնելը Կապալառուն պետք է կատարի կեղտաջրերի կազմի վերլուծություն:

Աշխատանքների ավարտից հետո հանձնաժողովը կազմում է ակտ: Փորձարկումը համարվում է ավարտված ակտի հաստատման պահից:

6.2.7 Ձողակարերի ստուգում

Նախագծով նախատեսվում է զողակարերի ստուգում ճառագայթագրային մեթոդով:

Ձողակարերի ստուգում ճառագայթագրային մեթոդով պետք է իրականացվի այն անձանց կողմից, ովքեր ունեն համապատասխան ուսուցում և այդ աշխատանքը կատարելու վկայական և որոնց տարիքը 18 տարեկանից բարձր է:

Նրանք աշխատանքի ընդունվելիս պետք է նախնական բժշկական զննում անցնեն, իսկ 12 ամիսը մեկ պարբերական հետազոտություն:

Ստուգման համար ընտրվում են այն զոդակարերը, որոնք ունեն վատագույն տեսք:

Զոդակարերի ստուգումը նախատեսված է, որպեսզի հայտնաբերվեն զոդակարերի ներքին թերությունները (թերաեռք, ծակոտիներ, ներխառնուկներ, ճաքեր):

Զոդակարի որակը, հիմնվելով ճառագայթագրային ստուգման արդյունքների վրա, համարվում է բավարար, եթե այն չի պարունակում նախկինում հայտնաբերված թերությունները:

6.2.8 Մեկուսիչ աշխատանքներ

Մեկուսիչ աշխատանքները իրականացվում են համապատասխան «Գազաբոմ Արմենիա» ՓԲԸ-ի շինարարության և կապիտալ նորոգման օբյեկտների համար Պատվիրատուի կողմից մշակված տեխնոլոգիական քարտի:

Նախագծով նախատեսվում է ստորգետնյա հատվածների (պողպատե խողովակներ) համար օգտարործել “PAM” տիպի ամրանավորված ժապավենային մեկուսիչ:

Գազատարի վերգետնյա հատվածը (պողպատե խողովակ) և մետաղական էլեմենտները նախատեսվում է ներկել հակակոռոզիոն ներկով 2 անգամ, նախապես պատելով գրունտով (XC-010):

XC-010-ը պիգմենտների և օրգանական լուծիչների խառնուրդ է վինիլիդենքլորիդի լուծույթում վինիլքլորիդ պոլիմերով: Գույնը կարմիր-շագանակագույն մոխրագույն է, ոչ ավելի մուգ, քան յոդը: Հրավտանգ է! Չի թույլատրվում աշխատել կրակի բաց աղբյուրների մոտ:

Եթե XC-010 գրունտը հայտնվում է ձեր մաշկի վրա, պետք է լվանալ այն տաք ջրով և օճառով: Չորացրած ծածկույթը վնասակար ազդեցություն չունի: Փոխադրումը և պահպանումը կատարվում է մինչև 30°C ջերմաստիճանում: Տարան պետք է հերմետիկորեն փակված լինի և պաշտպանված լինի արևի ուղիղ ճառագայթներից և մթնոլորտային խոնավությունից: Մեկուսիչ նյութերի

հետ աշխատելիս ձեռքերը պետք է պաշտպանված լինեն ռետինե ձեռնոցներով, օգտագործվեն անհատական պաշտպանիչ միջոցներ, կանխել շնչառական և մարսողական օրգանների հետ շփումը:

Խողովակի մակերեսը պետք է չորացվի և մաքրվի կեղտից, ժանգից, փոշուց հողից, յուղից: Խողովակի մակերեսի մաքրման աստիճանը պետք է համապատասխանի մեկուսիչ նյութի տեսակին:

Ջողակաբերի մեկուսիչ նյութը պետք է համապատասխանի խողովակի մեկուսիչի տեսակին:

Բարդ կոնֆիգուրացիայով ստորգետնյա կոնստրուկցիաների (եռաբաշխիկ, անցում և այլն) մեկուսիչ աշխատանքները իրականացվում են Պատվիրատուի կողմից մշակված մեկուսիչ աշխատանքների տեխնոլոգիական քարտին համապատասխան: Այդ աշխատանքները իրականացվում են ձեռքով հետևյալ հերթականությունով՝ անմիջապես «Транскоп-Газ» նախաներկումից հետո ամբողջ մակերևույթը պատում են նախապես տաքացված մածիկը, ամրանավորված ցանցը և փաթաթանը (обертка): Ցանկալի է մածիկը տաքացնել (ոչ ավել քան 200°C) տեղում: Ամրանավորված ցանցը և փաթաթանը պետք է փաթաթել սպիրալաձև (при ширине нахлёста смежных витков не менее 3см), տաք բիտումա-պոլիմերային մածիկի շերտի վրա:

6.2.9 Էլեկտրամատակարարում, լուսավորություն, հողանցում և շանթապաշտպանություն

Բաշխիչ վահանակի արտաքին էլեկտրամատակարարումը իրականացվում է գոյություն ունեցող հենասյունից: Միացումը իրականացվում է 0,23 կՎ լարման ցանցից: Միացման տեղից մինչև բաշխիչ վահանակ նախատեսվում է կառուցել մալուխային գիծ (ՄԳ): Մալուխային գիծը իրականացված է ВВГнг-LS 2x16 մմ² մակնիշի մալուխով, որը անցկացվում է 0.8մ խորությամբ խրամուղում՝ Ø40մմ պոլիէթիլենային խողովակի մեջ, որի երկարությունը կազմում է 70մ:

Գազաբաշխիչ կայանի էլեկտրամատակարարումն ապահովվելու համար ըստ հուսալիության 1-ին կատեգորիայի, անհրաժեշտ է ունենալ էլեկտրաէներգիայի երկու անկախ աղբյուր: Հիմնական աղբյուր ընտրված է 0,23 կՎ օդային գիծը:

ԳԲԿ-ի տարածքի պահուստային էլեկտրամատակարարման համար նախատեսված է էլեկտրական հոսանքի դիզեյնին գնեքատոր 8կՎտ հզորությամբ, անցումը հիմնական էլեկտրամատակարարումից պահուստայինի իրականացվում է ավտոմատ կերպով, օգտագործելով ABP: Բաշխիչ վահանակը և դիզեյնին գնեքատորը տեղադրված են օժանդակ սենյակ №3-ում:

Բաշխիչ վահանակում նախատեսվում է Эталон ЩИТ-100 ինքնավար հրդեհաշիջման համակարգի տեղադրում (բաշխիչ վահանակի հրդեհային անվտանգությունն ապահովելու համար):

Օժանդակ սենյակ №1-ի, օժանդակ սենյակ №2-ի, օժանդակ սենյակ №3-ի, սանհանգույցի և օպերատորի սենյակի ներքին էլեկտրամատակարարումը իրականացվում է պղնձե մալուխով, որը տեղադրվում է սակառի մեջ, իսկ արտաքին էլեկտրամատակարարումը՝ խրամուղում խողովակի մեջ:

ԳԲԿ-ի տարածքի արտաքին լուսավորության համար տեղադրվում են լուսադիողային լուսատուներով մետաղական հենասյուններ:

Ճնշման կարգավորման հանգույցի շինության, ծախսաչափի շինությունում, օժանդակ սենյակ № 4-ում և շվաքարանում տեղադրվում են պայթյունապաշտպան լուսադիողային լուսատուներ, որոնց սնուցումը իրականացվում է այրմանը չնպաստող ВВГнг-FRLS տիպի մալուխով:

ԳԲԿ-ի տարածքում վերանորոգման աշխատանքների կատարման ժամանակ վթարային լուսավորության համար նախագծով նախատեսված է շարժական 12В լապտեր պայթյունապաշտպան կատարմամբ:

Տեխնոլոգիական սարքավորումների պաշտպանությունը կայծակի ուղիղ հարվածներից իրականացվում է 21մ բարձրությամբ M1-M4 շանթարգելների միջոցով:

M1-M4 շանթարգելների պաշտպանության գոտին ներառում է սարքավորումներ, որոնք նորմալ տեխնոլոգիական ցիկլի ընթացքում լցված են դյուրավառ գազերի արտանետումներով:

Շանթարգելի հողանցման կոնտուրի դիմադրությունը տարվա ցանկացած ժամանակահատվածում չպետք է գերազանցի 10 Օհմ-ը:

ԳԲԿ-ի տարածքում հողի տեսակարար էլեկտրական դիմադրությունը կազմում է 30 Օմ-մ:

Պաշտպանիչ հողանցման կոնտուրները կազմված են՝

- ուղղահայաց հողակցիչներից, պատրաստված 50x50x5մմ 2մ երկարությամբ անկյունային պողպատից համաձայն՝ ԳՕՍՏ 8509-93:

- հորիզոնական հողակցիչներից, պատրաստված 40x4մմ շերտավոր պողպատից համաձայն՝ ԳՕՍՏ 103-2006, որոնք տեղադրվում են խրամուղում 0.6մ խորության վրա:

Շանթարգելի հողանցման կոնտուրի դիմադրությունը տարվա ցանկացած ժամանակահատվածում չպետք է գերազանցի 10 Օհմ-ը:

Բոլոր էլեկտրամոնտաժային աշխատանքները կատարել համապատասխան գործող ПУЭ, 7-րդ հրատարակչության:

Շանթարգելների հավաքակցումը իրականացվում է հատուկ հատկացված հարթակների վրա (տես՝ թերթ 1):

Շանթարգելների մոնտաժը կատարվում է, երբ ԳԲԿ-ի տարածքը ազատ է (վերգետնյա շինությունների տեղադրումից առաջ):

Մալուխների և հողանցման անցկացումը պետք է կատարել գազատարի ստորգետնյա տեղադրումից հետո:

Հողանցման բոլոր միացումները կատարվում են եռակցման միջոցով:

Տարածքի բարեկաման բետոնային աշխատանքներն իրականացվում են ստորգետնյա աշխատանքներից հետո (խողովակաշարերի, մալուխների և հողանցման կոնտուրի տեղադրում և այլն):

Նախագծում մշակված են շանթարգելների տեղադրման տեխնոլոգիական սխեմա (թերթ 4):

6.2.10 Էլեկտրաքիմիական պաշտպանություն (ԷՔՊ)

ԳԲԿ-ի տարածքում պողպատե ստորգետնյա գազատարերի, խտուցքահավաքիչ բաքի և հոտավորիչի մատակարարման բաքի պաշտպանությունն իրականացվում է ПМ-20У տիպի պրոտեկտորով:

ԳԲԿ-ի ստորգետնյա գազատարերի պաշտպանությունը կոռոզիայից իրականացվում է կաթոդային պաշտպանության կայանի միջոցով:

Էլեկտրամեկուսիչ միացությունների (ԲՅՈ) տեղադրումը և շահագործումը պետք է իրականացվի «Գազատարների էլեկտրամեկուսիչ ներդիրների օգտագործման ուղեցույցի» համաձայն:

ԳԲԿ-ի ելքի №1 և №2 գազատարերի վրա իրականացվում է Էլեկտրամեկուսիչ ներդիրների ապամոնտաժում և տեղադրում (ԲՅՈ)՝ հսկիչ-չափիչ կետ ՀՉԿ-2-ով և ՀՉԿ-3-ով, իսկ ԳԲԿ-ի ելքի №1 գազատարի վրա տեղադրվում է նոր Էլեկտրամեկուսիչ ներդիր (ԲՅՈ)՝ հսկիչ-չափիչ կետ ՀՉԿ-4-ով:

Էլեկտրամեկուսիչ միացությունների (ԲՅՈ) տեղադրումը և շահագործումը պետք է իրականացվի «Գազատարների էլեկտրամեկուսիչ ներդիրների օգտագործման ուղեցույցի» համաձայն:

Հսկիչ-չափիչ կետերը կահավորված են ՅHEC-4MC տիպի երկարատև գործող պղնձարջասպե համեմատության էլեկտրոդներով՝ ներկառուցված օժանդակ (կամ համարժեք) էլեկտրոդներով: Էլեկտրոդը մշտապես տեղադրվում է գետնին՝ խողովակաշարի կողային մակերևույթից 0.1 մ հեռավորության վրա, կոմունիկացիայի ստորին մակարդակով, բայց ոչ ավելի, քան հողի սեզոնային սառեցման խորությունը:

Հոտավորիչի մատակարարման բաքի պրոտեկտորային պաշտպանության մալուխները միացվում են հսկիչ-չափիչ կետին (ՀՉԿ-5):

Խտուցքահավաքիչի պրոտեկտորային պաշտպանության մալուխները միացվում են հսկիչ-չափիչ կետին (ՀՉԿ-6):

ԳԲԿ-ի ստորգետնյա գազատարերի կոռոզիոն վիճակի ստուգման համար տեղադրվել են հսկիչ-չափիչ կետեր՝ ՀՉԿ-7, 8, 9:

Մալուխային գծերը տեղադրել 0,7մ խորության վրա: Այս նախագծում օգտագործվել են BBF 2x6մ² կտրվածքներով մալուխներ:

Բոլոր մալուխային ելքերը միացված են անմիջապես խողովակաշարին, օգտագործելով թերմիտային եռակցում:

Էլեկտրաքիմիական պաշտպանության մալուխի խողովակաշարին միացման կետերի մեկուսացումն իրականացվում է խողովակաշարի մեկուսացման հետ համատեղելի նյութերի միջոցով: Մեկուսացումը վերականգնելու հրահանգներ այն հատվածներում, որտեղ մալուխները եռակցվում են խողովակաշարերին - նկ. ՄՈՒՔ.ՅՄՅ-01-2013-07-002:

Գազաբաշխման կայանի կապիտալ նորոգման հետ կապված նախագծով նախատեսվում է ԿՊԿ կայանի վերատեղադրում:

Վերգետնյա սարքավորումները և խողովակաշարերը փորձարկումից հետո պետք է նախաներկել և ներկել 2 անգամ:

6.2.11 Ջեռուցում և օդափոխություն

Շինությունների ներսի օդի հաշվարկային պարամետրերը ընդունված են համաձայն գործող նորմերի և կանոնների:

Ջերմամեխանիկական լուծումներն են՝ 24 կՎտ գազային կաթսա պատի մոնտաժումով միկոնտուրանի հարկադրաբար ծխագազերի հեռացմամբ:

Ջեռուցման համակարգի ապահովիչ արմատուրը նախատեսված է կաթսայի ներքին համակարգի մեջ:

Կաթսայատան համար նախատեսված օժանդակ սենքը նախագծված է այնպես, որ ապահովվի համակարգի կառավարումը, տեխնիկական սպասարկումը, սարքավորումների մոնտաժային և ապամոնտաժային աշխատանքները համաձայն՝ սարքավորումների շահագործման անձնագրի և ցուցումների: Հիմնական շինությունների խմբերի ներսի օդի ջերմաստիճանի պարամետրերն են՝

- Տեխնիկական շինություններ (+5°C);
- Օժանդակ շինություններ և սենքեր (+5°C);
- Օպերատորի սենյակ (+22°C);
- Սանհանգույց (+18°C):

Օդը ջեռուցման համակարգից հեռացվում է ռադիատորի վերին մասում տեղադրված ձեռքով օդափոխման անցքերի (ծորակների) միջոցով:

Որպես հիմնական ջեռուցման սարքավորում ընտրված է սեկցիոնային մարտկոց H=500՝ կողային միացումներով:

Հոսքի չափիչ սենյակի օդափոխությունն ապահովվում է մշտական, ընդհանուր փոխանակմամբ, մատակարարմամբ և արտանետմամբ, բնական եղանակով (Ժամում 3 ծավալ): Օդի ներհոսքը կատարվում է դռան ստորին մասում գտնվող ճաղավանդակավոր ճաղերի միջոցով: Օդի արտանետումը կատարվում է հոսքի չափիչ սենյակի տանիքին տեղադրված արտանետման դեֆլեկտորի միջոցով:

6.2.12 ԳԲԿ-ի տարածքի բարեկարգում

ԳԲԿ-ի տարածքում նախատեսվում է՝

- հին բետոնե հարթակների քանդում,
- քարե շինությունների քանդում,
- հին ցանկապատի ապամոնտաժ,
- նոր ցանկապատի հենապան համար հիմքի իրականացում
- նոր ցանկապատի տեղադրում,
- շենքերի, շինությունների և սենքերի մոնտաժ,
- տարածքի հարթեցում և ասֆալտապատում:

Շենքերի, շինությունների և սենքերի մոնտաժման համար նախատեսվում են՝

- հողային աշխատանքներ,
- բետոնե հիմքերի տեղադրում,
- մետաղական հիմնակմախքի մոնտաժ,
- պատի և ծածկի սենդվիչ-պանելների տեղադրում,
- մետաղական էլեմենտների մոնտաժ և ներկում,
- մետաղական դռների և դեֆլեկտորի տեղադրում,
- մետաղապլաստե պատուհանների մոնտաժ,
- հատակի և հարթակների բետոնապատում,
- հատակի ցեմենտավազային շերտի իրականացում,
- հատակի իրականացում պրեսգրանիտից և կերամիկական սալիկներից,

- հարդարման աշխատանքներ (ցեմենտավազային սվաղ, ներկում ճակատային և լատեքսային ներկով):

Ապամոնտաժված էլեմենտները նախատեսվում է տեղափոխել ինքնաթափերով Պատվիրատուի մշտական բազա 70կմ հեռավորության վրա: Շինարարական աղբը հեռացվում է 10 կմ հեռավորության վրա:

7 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքները իրականացնելու ժամանակ անհրաժեշտ է կատարել ՀՀՇՆ 13-02-2022-ի պահանջները:

Մոնտաժային, եռակցման, բեռնման և բեռնաթափման աշխատանքներին թույլատրվում են անձինք, որոնց տարիքը 18 տարեկանից բարձր է և որոնք ունեն համապատասխան վկայական: Աշխատողները պետք անցնեն ուսուցում աշխատանքի անվտանգության վերաբերյալ:

Աշխատողները պետք է ապահովվեն հատուկ հագուստով և այլ անհատական պաշտպանության միջոցներով: Արգելվում է օտար անձանց մուտքը շինարարության տարածք: Դրա համար այդ տարածքը ցանկապատվում է (տես՝ Շինարարության կազմակերպման գլխավոր հատակագիծ):

Խողովակների միացման աշխատանքներ կատարող յուրաքանչյուր աշխատող պետք է իմանա՝ աշխատանքների կատարման տեխնոլոգիան, անվտանգության, հրդեհամարման և պայթյունների կանխարգելման հատուկ ցուցումներ, անձնական հիգիենայի կանոններ, տուժածներին առաջին օգնություն ցուցաբերելու մեթոդներ:

Վերին շնչուղիների հիվանդություն ունեցող անձանց արգելվում է այս աշխատանքը:

Թույլատրվում է սկսել աշխատանքը միայն այն դեպքում, եթե առկա է աշխատանքների կատարելու հրահանգներ, որոնք պետք է ներառեն անվտանգության խնդիրներ:

Հրդեհային անվտանգության պահանջները խախտելու և մարդու մարմնին եռակցման ընթացքում թողարկված գազերի և գոլորշիների երկարատև

ազդեցության դեպքում, ինչպես նաև լուծիչների հետ աշխատելիս, թթվածնի փոխանակումը կարող է խանգարվել, և կենտրոնական նյարդային համակարգը կարող է վնասվել: Եռակցման կայանքներ և այլ սարքեր օգտագործելիս պետք է առաձնորդվել տեխնիկական նկարագրություններով և դրանց շահագործման հրահանգներով:

Աշխատանքները անհրաժեշտ է կատարել ցերեկային ժամերին: Երեկոյան ժամերին աշխատանքները շարունակելու ժամանակ պետք է ապահովվի բանվորների աշխատատեղերի պահանջվող լուսավորությունը համաձայն ԳՕՍՏ 12.0.046-2014:

8 ԿՈՌԻՆԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Շինարարական մեքենաները, մեխանիզմները, սարքավորումները և գործիքները պետք է համապատասխան են աշխատանքի անվտանգության պետական ստանդարտներին և ունենան սերտիֆիկատներ, անձնագրեր:

Ամբարձիչներին թույլատրվում է տեղափոխել միայն այն բեռները, որոնց զանգվածը չի գերազանցում կռունկի բարձրացման հզորությունը:

Ամբարձիչը շահագործելիս չպետք է խախտվեն նրա անձնագրում և շահագործման ձեռնարկում նշված պահանջները:

Շինարարական մեքենաները պետք է ունենան կայծմարիչներ: Հրավտանգ աշխատանքների իրականացման տարածքում պետք է նախատեսվեն հրդեհի մարման համար առաջին անհրաժեշտության միջոցներ:

Բեռի տեղափոխումը կռունկով կատարվում է համաձայն տեխնոլոգիական քարտի, որտեղ ներկայացվում են բեռի ամրացման և տեղափոխման սխեմաներ՝ նշելով գործողությունների հերթականությունը, ճոպանների դիրքը: Նաև ներկայացվում են բեռի անվտանգ տեղաշարժման պահանջները:

Կռունկի աշխատանքի ժամանակ մեքենավարը չպետք է ուշադրությունը շեղի և զբաղվի մեխանիզմների վերանորոգումով:

Բեռի տեղափոխելու մեխանիզմը միացնելուց առաջ մեքենավարը պետք է համոզվի, որ բեռի տեղաշարժման գոտու տարածքում բացակայում են օտար անձինք և տա նախազգուշացնող ազդանշան:

Կռունկի շարժը էլեկտրահաղորդման գծերի տակ պետք է իրականացվի այն ժամանակ, երբ կռունկի սլաքը գտնվում է աշխատանքային դիրքում: Սլաքի վերևի կետից մինչև մոտակա էլեկտրահաղորդման լարը ընկած հեռավորությունը պետք է լինի ոչ պակաս 2մ-ից:

Արգելվում է կռունկի տեղակայումը այն հարթակի վրա, որի թեքությունը գերազանցում է կռունկի անձնագրով նշված թեքության չափից:


9 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումները պետք է իրականացվեն համապատասխան Հայաստանի Հանրապետության օրենքներին՝ ընդերքի, հողի, կենդանական աշխարհի պաշտպանության, մթնոլորտի, պատմական և մշակութային հուշարձանների, շրջակա միջավայրի պահպանության, համաձայն ՀՀՇՆ I-3.01.01-2008-ի պահանջներին: Վերականգնման աշխատանքները կավարտվեն, եթե բացակայում են վառելիքով և քսանյութերով, շինարարական և կենցաղային աղբով աղտոտված վայրեր, ինչպես նաև չվերականգնված բուսականությամբ տարածքներ: Կապալառու կազմակերպությունները պատասխանատու են բնապահպանության պետական կազմակերպությունների առաջ:

Կատարող




Կ.Սաֆարյան



ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Ապամոնտաժման ենթակա գոյություն ունեցող ցանկապատ (շինարարության ընթացքում ծառայելու է որպես շինհրապարակի ժամանակավոր մետաղական ցանկապատ)



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ՝


- Քանդման ենթակա գոյություն ունեցող շինություն
- Քանդման ենթակա գոյություն ունեցող հարթակ
- Շինհրապարակի մուտք (ԳԲԿ-ի տարածք)
- Մեքենաների շարժման առանցք
- Մեքենաների շարժման ուղղություն
- Շինանյութերի և սարքավորումների պահեստավորման, շինարարական թափոնների և ապամոնտաժված էլեմենտների հավաքման, ժամանակավոր շենք և շինությունների տեղակայման համար նախատեսված հարթակ
- Կենցաղային աղբի հավաքման բաք
- Լուսարձակներ
- Նախագծվող շանթարգել
- Շանթարգելների հավաքակցման և տեղադրման համար նախատեսված հարթակ
- Ավտոկրունկի աշխատանքի վտանգավոր գոտի
- Ավտոկրունկի աշխատանքի գոտի
- Ավտոամբարձիչ
- Ավտոինքնաթափ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

- Աշխատանքները իրականացվում են հաշվի առնելով ԳԲԿ-ի պարտադիր անխափան և շարունակական աշխատանքը:
- ԺՇԼՇ-ի հարթակը տեղակայվում է ԳԲԿ-ի տարածքում (շինություններից ազատ):
- Գծագիրը կատարված է առանց մասշտաբի:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՇԵՆՔ և ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աշխղեկի սենյակ
- Հանդերձարան
- Զուգարան
- Պահեստ գործիքների համար
- Կիսաձածկ պահեստ




ՄԵՔԵՆԱՆԵՐԻ և ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ավտոկրունկ
2. Ճոպան (սրոն)
3. Կողային ավտոինքնաթափ

ՈՒՅԻՆ


ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝



1. Տեխնոլոգիական սխեման մշակված է ԳԲԿ-ի սարքավորումների, խողովակաշարային արմատուրի, պողպատե խողովակների բեռնման և բեռնաթափման համար:
2. Բեռնման և բեռնաթափման աշխատանքներն իրականացվում են ավտոկրունկով:
3. Ավտոկրունկները պետք է կայանվեն այնպես, որ կրունկի պտտվող մասի (ցանկացած դիրքում) և շենքերի, բեռների կույտերի, այլ առարկաների միջև հեռավորությունը լինի առնվազն 1 մ:
4. Աշխատանքներին (սրոնով քարեր) կարող են թույլատրվել այն բանվորները, որոնք անցել են համապատասխան ուսում և ստացել են վկայական: Վկայականը պետք է պարունակի որակավորման արձանագրություն:
5. Նախքան բեռների բարձրացման և տեղափոխման աշխատանքները սկսելը, բանվորը պետք է ստանա որոշակի տեսակի աշխատանքի հանձնարարություն այն անձից, որը պատասխանատու է ամբարձիչ մեքենաների հետ աշխատանքի անվտանգ կատարման համար:
6. Կատեգորիկ արգելվում է անցնել կամ կանգնել բարձրացվող կամ իջեցվող բեռի տակ:
7. Բարձրացվող բեռի քաշը և ճոպանի քարշային ճիգը չպետք է գերազանցի թույլատրելի:
8. Տեղադրման աշխատանքները անհրաժեշտ է կատարել ցերեկային ժամերին: Երեկոյան ժամերին աշխատանքները շարունակելու ժամանակ պետք է ապահովվի բանբորների աշխատատեղերի պահանջվող լուսավորությունը համաձայն ԳՕՍՏ 12.0.046-2014:
9. Բեռների վերանբարձ աշխատանքների ընթացքում արգելվում է աշխատել անսարք մեխանիզմներով և շտկել փոքր անսարքությունները:

Սխեման կատարված է առանց մասշտաբի:

ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ՄՈՄԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՍԽԵՄԱ




ՄԵՔԵՆԱՆԵՐԻ և ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՑԱՆԿ


1. Ավտոկրունկ
2. Ճուպան (crone)
3. Կողային ավտոինքնաթափ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

1. Արտանետման մոմի տեղադրման աշխատանքները նախատեսվում է իրականացնել հետևյալ հերթականությամբ՝
 - փոսորակի քանդում;
 - բետոնե նախապատրաստական շերտի իրականացում;
 - արտանետման մոմի բեռնաթափում ավտոտրանսպորտից;
 - արտանետման մոմի տեղադրում նախագծային դիրքում;
 - հակադարձ լիցք:
2. Խողովակային դետալների գողակարերը իրականացնել համաձայն ԳՕՍՏ 16037-80*:
3. Տեղադրման աշխատանքներից հետո մոմի վերգետնյա մետաղական հատվածը նախատեսվում է ներկել լաքաներկային նյութերով:
4. Մոմի ստորգետնյա և բետոնապատման ենթակա հատվածների հակակոռոզիոն մեկուսացումը նախատեսվում է իրականացնել «ПНК» տիպի մեկուսիչ նյութերով:
5. Տեղադրման աշխատանքների գոտին անհրաժեշտ է նշել ազդանշանային ժապավենով, համապատասխան ավտոմեքանիզմի վտանգավոր գոտու սահմաններին:
6. Բարձրացվող բեռի քաշը և ճուպանի քարշային ճիգը չպետք է գերազանցի թույլատրելի:
7. Տեղադրման աշխատանքները անհրաժեշտ է կատարել ցերեկային ժամերին; երեկոյան ժամերին աշխատանքները շարունակելու ժամանակ պետք է ապահովվի բանբորների աշխատատեղերի պահանջվող լուսավորությունը համաձայն ԳՕՍՏ 12.0.046-2014:
8. Կատեգորիկ արգելվում է անցնել կամ կանգնել բարձրացվող կամ իջեցվող բեռի տակ:
9. Բեռների վերանբարձ աշխատանքների ընթացքում արգելվում է աշխատել անսարք մեխանիզմներով և շտկել փոքր անսարքությունները:
10. Տեղադրման աշխատանքները իրականացվում են, շինմոնտաժային կազմակերպության ղեկավարի որոշմամբ նշանակված, պատասխանատու անձի ղեկավարությամբ:
11. Չափերը գծագրում ներկայացված են մետրերով:
12. ԺՇևՇ-ի հարթակը տեղակայվում է ազատ տարածքում:
13. Տեղադրման աշխատանքները իրականացվում են համաձայն՝
 - ԳՕՍՏ 12.3.009-76* «Բետոնափոխադրման աշխատանքներ»,
 - ՀՀԾՆ 13-02-2022 «Աշխատանքի անվտանգություն շինարարությունում»:



ԱՄՐԱԿԱՊՄԱՆ
(СТРОПОВКА) ՄԽԵՄԱ



ՄԵՔԵՆԱՆԵՐԻ և ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՑԱՆԿ՝

1. Ավտոկրունկ
2. Ճոպան (строп)
3. Կողային ավտոինքնաթափ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

1. Շանթարգելի տեղադրման աշխատանքները նախատեսվում է իրականացնել հետևյալ հերթականությամբ՝

- փոստրակի քանդում;
- բետոնե նախապատրաստական շերտի իրականացում;
- միջադիր դետալի և հիմքի իրականացում;
- շանթարգելի բեռնաթափում ավտոտրանսպորտից;
- շանթարգելի տեղադրում նախագծային դիրքում;
- կոնստրուկցիայի ամրացում:

2. Շանթարգելի կայմը (мачта) հավաքակցվում է տեղում: Շանթարգելի հենարանի կառուցվածքը հավաքովի է և բաղկացած է 5 հատվածից (քանի որ շանթարգելի բարձրությունը գերազանցում է 12 մետրը): Շանթարգելի հենարանի կառուցվածքը հավաքովի է և բաղկացած է 5 հատվածից (քանի որ շանթարգելի բարձրությունը գերազանցում է 12 մետրը): Տեղադրման ընթացքում հատվածները միացվում են միմյանց զգալի ուժ գործադրելով, որտեղ մեկ տարրը տեղավորվում է մյուսի մեջ: Շանթարգելը տեղադրելու համար նրա կառուցվածքի տարրերը միմյանց ամրացվում են հատուկ ամրացնող տարրի միջոցով (շերտային պողպատ) էլեկտրաեռակցումով: Շանթարգելի բաղադրիչների սկզբում (фиксация) նախատեսվում է հեղույսային միացումներով:

3. Տեղադրման աշխատանքների գոտին անհրաժեշտ է նշել ազդանշանային ժապավենով, համապատասխան ավտոկրունկի վտանգավոր գոտու սահմաններին:

4. Բարձրացվող բեռի քաշը և ճոպանի քարշային ճիգը չպետք է գերազանցի թույլատրելի:

5. Տեղադրման աշխատանքները անհրաժեշտ է կատարել ցերեկային ժամերին: Երեկոյան ժամերին աշխատանքները շարունակելու ժամանակ պետք է ապահովվի բանբորների աշխատատեղերի պահանջվող լուսավորությունը համաձայն ԳՕՍՏ 12.0.046-2014:


6. Կատեգորիկ արգելվում է անցնել կամ կանգնել բարձրացվող կամ իջեցվող բեռի տակ:

7. Բեռների վերանբարձ աշխատանքների ընթացքում արգելվում է աշխատել անսարք մեխանիզմներով և շտկել փոքր անսարքությունները:

8. Տեղադրման աշխատանքները իրականացվում են, շինմոնտաժային կազմակերպության ղեկավարի որոշմամբ նշանակված, պատասխանատու անձի ղեկավարությամբ:

9. Սխեման կատարված է առանց մասշտաբի:

10. Տեղադրման աշխատանքները իրականացվում են համաձայն՝
-ԳՕՍՏ 12.3.009-76* «Բեռնափոխադրման աշխատանքներ»,
-ՀՀՇՆ 13-02-2022 «Աշխատանքի անվտանգություն շինարարությունում»:



ՄԵՔԵՆԱՆԵՐԻ և ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Ավտոկրունկ
2. Ճոպան (crpon)
3. Կողային ավտոինքնաթափ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

1. Ստորգետնյա հոտավորման տարրայի տեղադրման աշխատանքները նախատեսվում է իրականացնել հետևյալ հերթականությամբ՝
 - փոսորակի քանդում;
 - նախապատրաստական շերտի իրականացում տարրայի տակ փափուկ բնահողից;
 - տարրայի և տեխնոլոգիական խողովակաշարի տեղադրում;
 - հետադարձ լիցք:
2. Տեղադրման աշխատանքների գոտին անհրաժեշտ է նշել ազդանշանային ժապավենով, համապատասխան ավտոամբարձիչի վտանգավոր գոտու սահմաններին:
3. Բարձրացվող բեռի քաշը և ճոպանի քարշային ճիգը չպետք է գերազանցի թույլատրելի:
4. Տեղադրման աշխատանքները անհրաժեշտ է կատարել ցերեկային ժամերին; երեկոյան ժամերին աշխատանքները շարունակելու ժամանակ պետք է ապահովվի բանբորների աշխատատեղերի պահանջվող լուսավորությունը համաձայն ԳՕՍՏ 12.0.046-2014:
5. Կատեգորիկ արգելվում է անցնել կամ կանգնել բարձրացվող կամ իջեցվող բեռի տակ:
6. Բեռների վերանբարձ աշխատանքների ընթացքում արգելվում է աշխատել անսարք մեխանիզմներով և շտկել փոքր անսարքությունները:
7. Տեղադրման աշխատանքները իրականացվում են, շինմոնտաժային կազմակերպության ղեկավարի որոշմամբ նշանակված, պատասխանատու անձի ղեկավարությամբ:
8. Չափերը գծագրում ներկայացված են մետրերով:
9. Միեման կատարված է առանց մասշտաբի:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

N/N	Աշխատանքների անվանում	Տևողություն, օր	Բանվորների քանակը հերթափոխում	Բրիգադի կազմ	Աշխատանքների տևողությունը ըստ ամիսների					
					I	II	III	IV	V	VI
					Աշխատանքների տևողությունը ըստ օրերի					
					22 աշխ. օր	22 աշխ. օր	22 աշխ. օր	22 աշխ. օր	22 աշխ. օր	22 աշխ. օր
1	Նախապատրաստական աշխատանքներ (նաև բետոնե հարթակների)	22	10	1 -ին բրիգադ՝ էքսկավատորի մեքենավար-1, հողափոր (հարվածահատ մուրճ) -4, կռունկի մեքենավար-1, մոնտաժող-2, եռակցող-2, մեկուսիչ աշխատանքներ-3, բանվոր (такелажник)-3 2 -րդ բրիգադ՝ ատաղնագործ (плотник)-2, ամրանագործ-2, բետոնագործ-2 3 -րդ բրիգադ՝ ատաղնագործ-2, մոնտաժող-2, տանիքագործ-2, ծեփագործ-2, ներկարար-2 4-րդ բրիգադ՝ ասֆալտապատող-10						
2	Հողային աշխատանքներ (խրամուղիների, փոսորակների և փոսերի քանդում, խողովակի նստաշերտի ստեղծում և ծածկում փափուկ բնահողով, հետադարձ լիցք)		4							
3	Բետոնացման աշխատանքներ (կաղապա- րամածի տեղադրում, ամրանային աշխա- տանքներ, բետոնի տեղադրում, բետոնի հասունացում-28 օր, կաղապարամածի քանդում)		6							
4	Մոնտաժման աշխատանքներ (խողովակների, սարքավորումների, մետաղական կոնստրուկ- ցիաների, շանթարգելի հավաքակցում, եռակցում և մոնտաժ)		8							
5	Մեկուսացման և ներկման աշխատանքներ		3							
6	Տեխնոլոգիական խողովակաշարի լվացում, փչամաքրում, փարձարկում և զողակարերի ստուգում		5							
7	Գոյություն ունեցող շինությունների ապամոնտաժ և նորերի մոնտաժ		10							
8	ԳԲԿ-ի տարածքի բարեկարգման աշխատանքներ (հին ցանկապատի ապամոնտաժ և նորի մոնտաժ, տարածքի հարթեցում և ասֆալտապատում)		10							

- -

աշխատանքների իրականացում ընդմիջումներով
- -

աշխատանքների իրականացում առանց ընդմիջումների

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝

1. Աշխատանքներն իրականացվում են մասնագիտացված բրիգադներով:
2. Օրացուցային գրաֆիկը հիմնված է՝ 1 ամիս - 22 աշխատանքային օր:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ՇԱՐԺՄԱՆ ԳՐԱՖԻԿ

